## 1.

## ՏԱՂ Ի ԽԺԸԺՑԻՈՅ

### ԶԱՔԱՐԻԱ ԵՊԻՍԿՈՊՈՍԷ ԱՄԵՆԱՅՆ ԳՆՈՒՆԵԱՑ

Առաջին մարդոյն նմանիս,
զոր ստեղծեաց Հայրն անեղական։
Բանըն ծոցածին անճառ,
գնայ արար պատկեր տիրական։

Գեղեցիկ ես քան ըզնա,
զոր շինեաց աջըն հայրական։
Դու չես հողեղէն զարմէ,
՚ւ ի լուսոյն ես արփիական։

Երկնից բանակքն անմահից,
ըզպատկերըն քո հիանան։
Զքեզ իւղ մեծագին սեեմ,
որ խորհուրդ ես արքայական։

---

1. Բնագիրը ընդօրինակված է Մատենադարանի Թ. 684, թղ. 47ա—49բ ձեռագրից (= A.)։ Համեմատված է Ա. Վ. Տեքեյանի հրատարակության հետ (= H. տե՛ս Հայերեն, էջ 78–81)։ Հմմտ. Հանդ. Ամս. էջ 238։

Խորագիրը A. ունի "Այլ տաղ ի խժըժցոյ Զաքարայ եպիսկոպոսէ ամենայն Գնունեաց„. H. "Այլ տաղ Զաքարեայ Գնունեաց եպիսկոպոսէ„։

4. H. մարդոյ նմանես։ — 6. H. բանին։ — 7. H. գնայ։ — 11. H. չէ՛ ՚ւ։ — 12. H. բանակ անմահին։ — 13. H. ընդ պատկերըն։ — 14. H. իւղ։